

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԶԳԾԱՐՄԱԿԱՆ ՀԸՆԴՀԵՄ, X գիրք:—
«Քոյայ վանի կամ նոր Գևսիկ» վեր-
նագիրը կրող յօդուածում պ. Ի. Յա-
րութիւնեան տալիս է հայոց միակ
զատասանագրքի հեղինակ Միկիթար
Քոչի կենսագրութիւնը և նրա հիմնած
վանքի պատամական-նկարագրական տե-
սութիւնը: «Աշուղեների մասին» յօ-
դուածում պ. Թ. Լևոնիանը աշշըլների
մասին տալիս է ընդարձակ տեսու-
թիւն, համեմատում է նրանց միջնա-
գարեան և բռոպական միջնէզիգերների,
արորագրալների և բարդիրի հետ, ա-
պա տալիս է նշանաւոր հայ աշուղենե-
րի գնահատութիւնը, որ ոսկայն իր
կողմից ևս կարօտ է վերջնահատու-
թեան... Նէզորդ Տառուածարեան «Սա-
յար-նովայի անեյայ երգերից» գր-
րուածքում բերում է այդ նշանաւոր
աշուղի մի քանի անյայտ երգեր, քա-
զիրով Պետական գիտական ձեմա-
րանի Ըստական Թանգարանում պա-
հուած մի մատեսնից: «Յորշալու գա-
ւառու»-ի աղջագրական ուսումնալիրու-
թիւնը կատարել է պ. Ե. Լարյուեան,
այդ ընդարձակ գրուածքին կցած են
մի քանի լուսարանող նկարներ: Խ.
Սամուէլեանն «Երեան վրեժ և փր-
կանն» յօդուածում քննում է սովո-
րութեան իրաւունքի այդ երևոյթները
հայկական կեանքում, որքան այդ ար-
տայայտուած է հայոց քարար և բանա-
ւոր գրականութեան, հայոց զատասան-
ագրքի, ինչպէս և ժողովրդի կեան-

քում կեսևս գրյութիւն ունեցող սովո-
րութիւնների մէջ: Ինչպէս տեսնում է
ընթերցողը՝ աղջագրական գիտութեան
շատ հարուստ պաշար է պարունակում
այս հատորի մէջ:

ՀԱՆԴԻՍ ԸՄՍՈՐԵԱՑ, գեկտեմբերի:—
Զում մասնագիտական թերթ է դառ-
նում և Վիէննայի Միկիթարեանների օր-
գանը, դաղարեցնելով «Գաղաքական
տեսութեան», «օգտակար զիտելեաց»
և այլ նիկերի տպագրութիւնը: Եւ իս-
կապէց շատ խելացի է այդ որոշումը,
քանի որ այդ գէն զցած բաժինները,
զանազան հանգամանքների շնորհիւ,
չէին կարող լիակատար լինել Մեր
գաղաքանութիւնը պէտք ունի աշխա-
տանքի բաժննման, ուստի կարելի է ող-
ջունել Վիէննայի Միկիթարեանների ո-
րոշումը՝ զառնալ ընդարձակ ըմբռնումով
հայպիտութեան ուսումնաթերթ: Ցան-
կալի է, որ ամենալիակատար կեր-
պով խմբագրութիւնը կարողութիւն
ունենայ իրավուծել իր նպատակը և
ամենանուրը գործիքի պէս արձանագր-
քի այն ամենը, ինչ կատարում է
հայպիտութեան ընդարձակ զատառում
հայ և օտար գիտնականների ջանքե-
րով:

Այս համարում տպուած են հետեւեալ
յօդուածները. — Գ. Խալաթեանի «Կրիւ-
տուին յարողը հայոց Արտաշէս բա-
գաւո՞՞ւ եր զերմաններէն ուսումնա-
սիրութեան թարգմանութիւնը. «Հընդ-

Եւրոպական S վերջատուը հայերէնի
միջ՝ լեզուարանական գրուածքը. «Դոկտ.
Ռուսինեանի կենսագրականի վերջը,
«Դոկտ. Անտոն Արակեանի» կենսա-
գրութիւնը, «Կողոյ»-ի մասին ուսում-
նասիրութիւնը, 2. Բազրուցանեանի
«Սուլգարանական հետազօտութիւնը»
և մատենախոսականներ: Հայագիտու-
թեան են նույրուած և Մարբրուգի
«Հանդէս Հայագիտութեան», ինչպէս և
մասսամբ Պարիզի «Բանասէրը», որ ա-
ռայժմ անաջող ձգտում է լինել նաև
գրական հանդէս: Մեզ թում է, թէ
«Հանդէս Ամսօրեայ»-ն աւելի նպատա-
ւոր պայմաններ ունի հայագիտութեան
կենտրոնական օրգան լինելու և նա
պէտք է ձգտի այդ գիրքը գրաւելու:

ԱՆԱՀԻՑ, հոկտեմբերից՝ Վաթոս
նախան թաւականների գրական դէմքե
րից մէկի Խ. Պ. Միսաքեանի մոռա
ցուած անունը լիւշընելու և այլ գրո
ղին ծանօթացնելու նպատակով հրա
տարակել է «Միսաքեանի ամենին զե-
ղեցիկ էջերէն մէկը, Քաղուուի գրա-
յուսածաշարք մը», որ բաւականաշակ
դադար է տալիս այդ մոռացուած
հեղինակի մոռածողութեան և գրելու
մասին:

Բազմավեայ, նոյեմբեր: — Հետեւալ արդարացի գիտողութիւնն ենք կարգում այդ համարում.

«Թիվիլսցից Զանշեանը, Մոռկուալի
Լազարեան ճեմաբանէն յետ չաշանտ-
աւրտ ըլլալու, նոյն քաղաքին չամալը-
սարանը իբրաւաբանութիւն կ'ուսանի.
Վիշապականը ստանալով, ինքինքը ը-
լորովին ոստ գրականութեան կը
նուիրէ: Զանազան հրատարակութիւն-
ներուն մէջ, Նշանաւոր է ոստ ճոր-
տերու ազատազգութեան դատը ու-
սումնասիրով ստուար հատորը: Այս
վիրը կարձ ժամանակամիջացի մը
հօթ տպագրութիւն կ'ունենայ: Հեղի-
նակը իբր հրապարակափակի քան տարի
կ'աշխատացի Ծուռակիէ Վեղումուսի
Ժերթիւն: Զանշեան՝ ցեղով հայ, մափով
ուսուն է:

Ուստիյ Հայոց մտաւորական շաբ-
ժումը զիտաղները կը տեսնեն թէ զար-
գացեալ հայ երիտասարդութիւնը հե-
ռոցհետէ ամէլի կը միտի ուսւելվար զի-
ւու: Ենդրպարկի, Մուկուայի ուսւ օրա-
բրութիւնը հայ աշխատավիցներ ունի-
այի երը Թիֆլիս, Բագու ուսւելին թիրթի
ը հիտարարկնեն: «Փոքրձ» ու «Արձա-
նդ» հիմնող Արգար Յովհաննիսիւ-
ին զաւակը, ուսւելվար թիրթի մը
մրագրապեսութիւնը կը հետամտի:
Եւրոպական հօգոր քաղաքակրթու-
իս մը, որպիսին է ուսւականը,
նաև կանարար իր մէջ պիտի հալեցը-
ւ: ասիսցի հարան տկարագոյն քա-
րակալրութիւնը, հետարարը և ա-
ր լեզուն: Արդիշ առթիւ գտնել տու-
չ ենք որ հայը Թիֆրիոյ մէջ որքան
կիլ կը զարգանայ այնքան ալ աւելի
որեավարէն խոյս կու տայ. իսկ Խուսիւոյ
Հ հայը որքան աւելի կը յառաջադիմէ,
ասկան լեզուին ալ այնքան աւելի
յարի: Զատ հապուադէպ պարագայ
է հանդիպել թրբեվար խօսակցող
պրիացի երկու հայ մատորականի,
չ՝ զարգացած ուսւահաները իրենց
լափարները գրեթէ միշտ ուսւեկար
փոխանակին: Զանշեսնի մը զերեղ-
ին առջեն հայ զանբանախօսն իսկ
ժեշտի ողջոցնը կու տայ գոչելով.
աս բարո՛ւ Քրիստո Եւետովիշ»:
հետապնդնք Պոլիս «մնաս բարո՛վ,
ուս օլլու Քրիտոր» բացագանչու-
ու:

Ըստահայ գրալէտին ապագան՝
ուստական մատենագրութեան մէջ է:
Գրականութիւնը՝ Եւրոպացիին համար,
Ամերիկացիին համար ասպարէզ մըն է,
ասպարէզ մը պիտի ըլլայ և՛ հայուն հա-
մար: Հայր գաճառականութիւն կ'ընէ
ուսեբէն լեզուով. ու՝ ուսեբէն լեզուով
զինուրացան ծառայութեան մէջ կը
մտնէ, կառավարական ու վարչական
պաշտօններ կը ասանձնէ. նոյնը պիտի
ընէ և գրական ասպարէզին համար ալ,
ուր փառք, համբաւ, դրամ պիտի գտնէ
եթէ իրական ատաղնդով մը ներկայա-
նայ: Հայր՝ ոչ հայկական ասպարէզնե-
րու մէջ նույպար, Մելիքրօֆ, Յակոպ

փաշա եղաւ, ոչ-հայ մատենագրութեան մէջ ալ շատ բարձրերը պիտի կրնայ սաւառնիլ: Գրիգոր Աղաթօնին մահը Տատեօնգիտութեան համար մեծ կորուստ մը համարաւեցաւ, որովհետեւ այդ հայը՝ Թիւրքիոյ նախարար մը եղաւ ու օտար լեզուներով գրեց: Տարակոյս չկայ թէ Գրիգոր Զանշեան մը իր բոլոր տաղանդվը հանդերձ պիտի մեռնէր խեղճ աղքատ, թշուտո, և շատ հաւանորէն՝ իր պազէն հալածեալ մը, եթէ պարզապէս իրը հայ հրապարակադիր երեւան եկած ըլլար: Բայց որովհետեւ ուստ գրոյ մը եղաւ, ուստի և իր կենդանութեանը մեծ հոշակ վայելեց, և իր մահն ալ հանրալին սուզի մը համեմատութիւնները առաւ: Եթէ Տիգրան Երկաթ ատեն մը եւս ապրելու ըլլար, իրեն երսովական համրաւ մը պիտի շնէր: Բարիկ մեծ չանդը մը կը փոխարինէր տաղանդաւր չայցուն աշխատութիւնները, որոնք եթէ հայերէն գրուած ըլլային, և ոչ իսկ սենեկի մը վարձքը պիտի կրնային հայթայթել հիւանդին: Ու մինչ Սիսլի մը—բանաստեղծունի—իր բոլոր տաղանդվը հանդերձ հագի կը ժանօթանայ անձուկ շրչանակի մը, անդին հայ արին Աղանդը ալլապէս հանրածանօթ է, վասն զի իտալերէն կը տաղաչափէ:

Մենք այս տեղ և և է փաստարանութեն շենք ըներ, և ոչ ալ՝ մատաւրական երևոյթի մը պատճանները քննելու կ'ելլենք. կը հաւասարն իրողութիւն մը, կամ տեւիլ ճիշտը՝ կը ջանանք Խոտիոյ չայց մտաւրականութեան վերապահուած ապագան ընդունաբել, զոնէ աղօտ իմ:

LA REVUE Փրանսիական ամսագրի գլւակամբեր 1-ի համարը պարունակում է կանանց բարձրագայն կը թութեան մասին մի հնուարքը բարձրագայն յօդուած: Ըսդհանրապէս կարպատում է, որ իգական սեփական բարձր կը թութեան խնդիրը քաղաքակիրթ երկրներում այլիս վիճարանութեան նիւթ չի դառ-

նում: Բայց ահա թէ ինչ ենք կարգում այդ յօդուածում.

«Ըստմ Նմերիկայից է գալիս մեզ ամենաանսպասենիլ, ամենաաղեցուցիչ նորութիւնը, ասում է Լա Բեռու: Սեների համարիթութիւնը, ֆեմինիգմի այս գերազանց յաղթանակը, ուրավ ամերիկոնիները օգտում էին վաղոց հնուէ^{*)}, այժմ փանդի է նեթարկում սոյնիսկ իր սկզբունքի մէջ: Այնաեղ թերթիւնի և ամսագրերի մէջ սկսուած է մի կատաղի պարագար կանոնց բարձրագոյն կրթութեան դէմ: աշխատում են փակել ուսանողունիների առաջ համալսարանների գաները, հարաբեկ նրանց բացառապէս կանանց կուլբենիրում և ենթարկել բացափկ ծրագրների և բեժիմի, այսինքն նըրանց համար ստեղծել մի ստորագառ կրթական վիճակ:

Եւ 2իկագօի համալսարանի նախագահ չապահեն է տալիս այդ ընդհանուր պայքարի աղգանշանը, այն չարգերը, որ մի ժամանակ կանանց աղաստութեան և իրաւունքների չիրմագատան էր, և որ այժմ այս ցաւալի յետագրձութիւնն է յանձն առուում՝ քաշելով իր յետեկց որիշներին:

Ի՞նչ է պատճառը այս յանկարծական փոփոխութեան. զուցէ սա մի անհրաժեշտ ու անցողական բէակցիա է, որ սովորաբար հնակում է չափազանց արագ տիրապետութիւններին և առաջադիմութեանը: Նմերիկացիք սիրում են այրել այն, ինչ պաշտել են մի ժամանակ... զուցէ պէտք է այդ թշնամութիւնը վերագրել տնտեսական և հասարակական պայմաններին, որոնք առաջ են բերում զասակարգայն, ինչպէս և սեների մըցում:

Մեղ համար այդ մինոյն է. մենք կուզինք միայն իմանալ, թէ արգեօք Նմերիկան մենակ չէ կանանց համալրսարական կը թութեան դէմ: Եւրոպա-

*) Առաջին անգամ 1833 թ. Օրեիլինի (Օհիօ) կուլեֆը ընդունեց կանանց:

ուում Փեմբինդմը ունեցել է աւելի գանգաղ, պակաս փառաւոր ընթացք, բայց և այնպէս ամեն օր նա հաստատում է և երկան է գալիս, թէ ոչ շատ փայլուն, բայց անկասկած յաղթանակներով: Երբուական բոլոր համալսարանները համարեն բաց են կանանց առաջ: Ֆրանսիական զանազան համալրասարանների գերջին սեմինարում ուսանողուհիների թիւը համարում է 1399-ի: Կանայք դեռ աւելի բազմաթիւ են ուրիշ երկրների համալսարաններում: Վերջապէս մի քանի երկրներում, ինչպէս օրինակ՝ Գրանսիա, Անգլիա (1869), Իտալիա (1870) և Բելգիա (1875), երեսուն տարի կայ, որ կանայք մասնակցում են համալսարանական կրթութեանը: Փորձառութիւնը արգելեն բաւական երկար է հաւանական վիճելու համար: Որո՞նք են այս փորձառութեան հետեւանքները»:

Այս հարցին պատասխանն ունենալու համար *Review-ն* հարկ է համարել գիտլ եւրոպայի խոշոր համալսարանների տեսուչներին և նշանաւոր պրոֆեսուրներին նրանց կարծիքները հարցնելով: Գերմանական, ֆրանսիական անգլիական, շվեյցարական, աստրիական, նիտական և այլ համարսարաններից ստացուած են պատասխաններ, որ մէջ չենք բերի տեղի պարութեան պատճառով: Այս պատասխանների վրայ հիմնուելով *Review-ն* իրաւունք է համարում անել հետեւալ եղբակացութենքը:

«Կանայք երբուական համալսարաններում հակառակորդներ չ'ունին. մեզ պատասխանող պրոֆեսուրները բոլորն էլ Փեմբինիաններ են, կամ զունէ հակաֆեմբինիաններ չեն: Ամենքն էլ համարեն ընդունում են, որ կինը տղամարդու չափ բարձրագայն կրթութեան իրաւունք ունի: Չափին թէ նըրանցից մի քանիսը՝ այն է երկրորդգական կտտերի մասին՝ սահմանափակումներ են անում: Բայց ամենքը միարեքան հաստատում են սեռերի համակըրթութեան բարիքները:

«Կանանց ներկայութիւնը մեր լր-

ասաւաններում—ասում է պ. Կրուադէ, Սոլլամի գրական փակուլտէի դուռընը-օժանդակում է ուսանողների բարի գաստիարակութեանը: Նրանք՝ ուսանողները, չնորհիւ կանանց ներկաւութիւն, միշտ գայելուց արտաքին ունին»: Հաւատացնում են նոյնպէս, որ կանանց ներկայութիւնը և երկու սեռերի մէջ առաջ եկած ընկերական յարարկութիւնները—մանաւոնդ հիւսիսի համալսարաններում—բոլորի մորավի վրայ ամենալաւ ազգեցութիւնն է անում: Կանայք արնանում են՝ տասնց ոչինչ կորցնելու իրանց հմայքից, արդամարդիկ «լաւանում են և ազնաւում»:

Մի խօսքավ, վերջացնում է *Review*, մեր քննութիւնից առաջ եկած շատ վճռական եղբակացութիւնները հետեւաներն են.

1) Երբուական համալսարաններում երկու սեռերի համակրթութիւնը ունի բազմաթիւ առաւելութիւններ և մի հատիկ լուրջ անպարմարութիւն, որը կ'այլայտանայ, երբ երկու սեռերն էլ կը ստանան համար սկզբնական դաստիարակութիւն:

2) Կանայք իրանց արքերը առամլութիւններով ու թերութիւններով ցայց են տալիս ուսման ընթացքում և քննութիւնների ժամանակ իրանց արդամարդ ընկերներին հաւատար կարութիւններ:

3) Եթէ համալսարանական կրթութիւնը կանանց մէջ մինչև այժմ առաջ չը բերեց խոշոր հանճարներ, բայց գոնէ նրանցից շատերին հնարաւորութիւն տուեց ստեղծել իրանց համար պատաւոր և անկախ կացութիւն:

Միթէ այսքանը բաւական չէ արդարացնելու համար կանանց բարձրագոյն կրթութիւնը:

РУССКАЯ МЫСЛЬ, ՏԱԿՏԵԿՐԵՐ:— «Ինչո՞ւ Ամերիկան ալդպէս արագ առաջ է զնում» հետաքրքրական յօդուածում պ. ն. Օգերովը մատնանիշ է անում ամերիկացիների այն առանձնալիակութիւնների վրայ, ո-

ըսնք պատասխանում են տուած հարցին: «Գերմանացիներն — առել է գմոնդ — աշխարհին առաջին ազգն են նիթեր ժողովելում, իսկ ամերիկացիները կարողանում են համարի կերպով օգտուել այդ նիթերից»: Ամերիկան կարող է ծառայել իրրի փառանդաղ ապացոյց այն մաքի որ բասաների մերձեցումը և ձուլումը տեղի է ունենում ոչ հալածանքի, այլ այսպատճեան, շահների ընդհանութեան և և զպրցի չնորհիւ: Եւլուպայում բանորի վրայ նայում են ոչ իրրի մարդու վրայ, որի մէջ պէտք է զնահատել խելքն և ինքնուրպոյնութիւնը, այլ իրրի մեքենայի մի մասի վրայ: Եշխատանքի բարձր վարձատրութիւնը ստիպում է ամերիկացուն անդուռ մըտածել տիինիկական կատարելագործութիւների մասին: Եզասութիւնը, նախանձող ոզին, արագ աշխատելու սովորութիւնը միացած երկը ընտական հարստութիւների հետ եանկիներին

դարձնում են աշխարհիս առաջնաշարգ արդինարերող-առևտորական ժողովարդը: Եւ ոչ մի անդ չէք զանիւ այնպիսի վիթխարի հարստութիւններ, ինչպէս Միացեալ Նահանգներում: Ենա օրինակի համար, Եմերիկայի հարուաների եկամուտները. Զօն Խոկ-ֆելքը տարեկան եկամուտ է ստանում 105,120,000 ը., Անդրի-Կարնեչիլ 50 միլիոն, Խասսել 18 միլիոն, Պլեք 16 միլիոն, Հովգ՝ 12 միլիոն, Պիրոմոնտ Մորգան 10 միլիոն ևայլն: Ֆըրանց համեմատութեամբ եւրոպական միապետները աւելի պակաս տարեկան եկամուտ ունեն: Այդ միապետներից ամենահարուատն է թիւքքաց սուլթանը, որի տարեկան եկամուտը հաւասար է 20 միլիոնի, գերմանական կայսրինը-7 միլիոնից աւելի, իտալականինը 5 միլիոնի շափ, Անգլիայի թագաւորը աւելի պակաս եկամուտ ունի—տարեկան $4\frac{1}{2}$ միլիոն:

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

ԲԱԴՈՒ, Պ. ԹՅԱՅԵ-ԻՆ («Բակ. Ազ.»).—«Մուրճում» տպուող «Հրաշակի դարբ» հոչակաւոր բնագէտ պրոֆ. Ըոլէսի գիտական միտեստութիւնն է XIX դարի դրական եւ բացասական կողմեր՝ վրայ: Եթէ այս գրուածքի գէտ առաջարանը կարդացած վենէիք, Զեզ համար պէտք է պարզ լինէր, որ դա «քոման» չէ: Զեր այդ սխալը հետաքրքրական է այն տեսակէտից, որ ցոյց է տալիս Զեր մի սովորութիւնը—ըստ կարդացած բաների մասին միծ ապլոմբով կարծիքներ յայտնելը: Լոկ թերթելով անցնել յօդուածները եւ ապա զանազան համամատութիւններ անել՝ դա լուրջ եւ բարեփափո՞մ մարդու գործ չէ...

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Բ

Երիս	տող	տպուած է	պէտք է լինի
119	17 պ.	զարդարել է	շաբշարել է
124	7 պ.	կեղծումները	զեղծումները